

այս քանակութեան՝ մասը կօրչումէ զօլորչիանալուց, այնու ամենայնիւ բացի անձրեւային ջրից, կմնայ 10 միլիոն լուացքաջրեր օրական (553000 Ռուսաց խորանարդ ոտնաչափ) կամ 1000 խորանարդ սաժէն, որոնց պիտի հեռացնել քաղաքից առանց դպցնելու գեանին, եթէ բոլոր լուացքաջրերը 2 խորանարդ մետր բաժանդակութիւն ունեցող տակառներով տանենք, այն ժամանակ հարկաւոր էր 5,000 տակառ, իսկ Պետերբուրգի պէս քաղաքներում օրական — 35,000 տակառ, շատ հասկանալի է՝ որ այդպիսի աղտոտ ջրի զանգուածը արկղներով և կամ տակառներով տանել անկարելի է, ուստի նրանց կարելի է հեռացնել միայն ստորերկրեայ խողովակների և ջրանցքների միջոցով, որոնք տարածումն են բոլոր փողոցներում, սրահներում և տներում և որոնք շուտով ընդունում են իրենց մէջ մասնաւոր և հասարակաց շինութիւնների լուացքաջրերը և նոյնպէս անձրեւի ջուրը, և շատ արագութեամբ հեռացնում են քաղաքից:

(Թարգմանութիւն)

Գլխաւոր ձեռն. Ա. Լասքանի Ուսանող

ՍԱՐԳԻՍ ՏԵՐ ԴԱՐԵԼԷԱՆ

ԴԱՍԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ.

(Շրջան. Արդ. 1881 Ա. Դր.)

1. Ի՞նչ պայմաններից կախումն ունի խրաքանչիւր առարկայի շարաձուլման դասերի թիւը: — Դասերի բաժանումը՝ օրերի և ժամերի համաժան: 2. — Ի՞նչ դիրք պէտք է բռնել դասերի բաժանումների ժամանակ: — 3, Դասերի կանոնաւոր բաժանումը պահելու կարեւորութիւնը: — 4, Դասերի բաժանման փոփոխութիւնները: — 5, Առաջին դասի սկսելու ժամանակը:

1. Որեւ իցէ առարկայից շատ կամ քիչ դասեր նշանակելը կախումն ունի ուսման ծրագրի ընդարձակութիւնից, որ պիտի անցնեն այս կամ այն դասարանում, և կա՛մ առարկայի կրթողական նշանակութիւնից, նոյնպէս և վարժողական կրթութեան փորձերի քանակութիւնից, որոնք անհրաժեշտ են այն առարկան անցնելիս:

Ինչքան որ ընդարձակ է ուսանելի առարկայի զարնթացի ծրագիրը, ինչքան որ առարկան պահանջումէ աւելի գործնական վարժութիւն, և ինչքան որ աւելի զարգացուցիչ նշանակութիւն ունի առարկան, այնքան ևս նորա համեմատ դասերի թիւը շատ պէտքէ նշանակել, և ընդհակառակն եղած ժամանակը քիչ:

Առաջարկութեան ուսումնարանների կանոնադրութիւններում ծրագրերի հետ միասին որոշուած է թէ՛ աշակերտները իւրաքանչիւր ուսանելի առարկայից ինչքան պիտի անցնեն այս կամ այն դասարանում, նոյնպէս դասերի թիւն այն առարկայից:

Իսկ նշանակուած դասերի՝ օրերի և ժամերի վերայ բաժանելը կախուած է տեղական պայմաններից և յանձնուած է ուսումնարանների տեսչութիւններին տեղական պայմաններին յարմարցնելու:

Դասերի շաբաթական ընդհանուր բաժանումը՝ բոլոր միատեսակ ուսումնարանների համար պարտաւորական տնելը միշտ յարմար էլը 1/նի. Այս անյարմարութիւնը յայտնի զգացվումէ այն ուսումնարաններում, ուր մի քանի դասարաններ և շատ ուսուցիչներ կան. և առաւել ևս զգալի կըլինէր այն ուսումնարանում, որի ուսուցիչներն ուրիշ ուսումնարաններում դասեր տալուց յետոյ՝ պիտի դան այդ ուսումնարանը:

Այսպիսի բաժանումը կգծուարացնէր ուսուցիչների գործը՝ առանց մի նշանաւոր օգուտ տալու ուսումնարանին, երբեմն ևս ընդհակառակն վնասակար կգտնար *):

Ամենադիւրին յարմարութեամբ կարելի կլինէր ընդհանուր պարտաւորեցուցիչ դասակարգութիւնը գործադրել այնպիսի ուսումնարաններում, ուր դասարանում է ուսուցիչ և միայն, ինչպէս սկզբնական ուսումնարաններում (Начальные школы): Այս դէպքում պատրաստի պարտաւորեցուցիչ դասերի ընդհանուր բաժանումը՝ ուսուցչին բացի շնորհացնելուց կազատէր նորան նոր դասացուցակ կազմելու աշխատութիւնից:

2. Ուսումնարանի վարչութիւնը՝ ուսումնական տարեգլխին որոշելով դասերի շաբաթական կարգը՝ իւր ուշքը պէտքէ դարձնէ այնպէս կազմել ընդհանուր դասացուցակը, որ աշակերտները սաստիկ չձանձրանան, որպէս զի ամեն օր աշակերտն առհասարակ հաւասարաշափ աշխատէ, և պարապմունքները նոցա առողջութեան չվնասելով հանգերձ՝ յառաջադիմութեան ևս նպաստեն: — Այս նպատակին հասնելու համար դասացուցակը կազմելու ժամանակն անհրաժեշտ է հետեւեալ հանգամանքներն աչքի առաջ ունենալ:

1. Յայտնի է որ՝ միտքը գործելով այն ժամանակն է արդիւնաւորում՝ երբ թարմ և զուարթ են լինում՝ նորա հոգեկան և գործարանաւոր ոյժերը: Չանձրացած աշակերտը չէ կարող լարել իւր միտքը այնպէս՝ ինչպէս որ կարողէ չձանձրացած ժամանակը: Նորա ուշադրութիւնն, ինչպէս որ հարկաւոր է, չէ կենդրոնանում և լարվում ուսանելի առարկայի վերայ:

Որովհետեւ գիշերուայ հանգստութիւնից յետոյ առաւօտներն ամեն մարդ աւելի զուարթ, ընդունակ է լինում, և կարողանումէ մտաւոր աշխատու-

*) Ընդհանուր պարտաւորեցուցիչ դասացուցակի մէջ, ասենք թէ, նշանակուած է Թուաբանութիւն (Арифметика) երեքշաբթի առաջին դաս. Թուաբանութեան ուսուցչի հանգամանքներն եւս չեն ներում նշանակեալ ժամին ուսումնարան գտնուել. այլ կարողէ շաբաթուայ մնացեալ միւս օրերի ա. դասերին դալ. Ռուսերէնի ուսուցչին եւս իւր համար յարմար գտնելով երեքշաբթուայ ա. դասը, չէ կարողանում դասացուցակում նշանակեալ ժամերին ուսումնարան դալ. իհարկէ. այս դէպքում պարտաւորեցուցիչ դասացուցակը՝ ուսուցիչների գործը կգծուարացնէր:

Թիւններ կատարել, քանթէ այն ժամանակ՝ երբ շատ աշխատելուց հոգեկան և գործարանական ոյժերը թուլացած են, ուստի հասկանալի է թէ՛ ինչո՞ւ առաւօտեան առաջին դասերին պէտքէ նշանակել աւելի այնպիսի առարկաներ, որոնք առաւել հոգեկան ոյժերի լարումն են պահանջում. (զօր. Թուարանութիւն. քերականութիւն և ըն.):

Իսկ դասերն այն առարկաներից, որոնց համար հարկաւոր կլինի աւելի քիչ լարել միտքը՝ կամ որոնց կատարումը միայն մեքենական գործողութիւններ են (զօր. վայելչագրութիւն և նկարչութիւն և ըն.), այդպիսիները պէտքէ նշանակել միտքի լարումն պահանջող առարկաներից յետոյ:

2. Մի քանի ժամ շարունակ մի և նոյն առարկայով պարապելը մտքիս ձանձրացնումէ, բխցնումէ նորա տպաւորականութիւնը և թուլացնումէ նորա ուշադրութիւնը գէպի այն առարկան: Իսկ փոփոխակի երբեմն այս և երբեմն այն առարկայով պարապելը՝ ներգործումէ այնպէս՝ ինչպէս թէ նա նորոգած նոր ոյժ տուած լինէր և պահպանումէ նորա ոյժերը և հանգստութեան տեղ է բռնում նորա համար: Մտաւոր գործունէութիւնից ձանձրանալուց յետոյ մենք մեքենական գործեր կատարելով՝ մի և նոյն ժամանակն և հանգստանումենք. և ընդ հակառակը:

Սորանից երևումէ որ դասացուցակը կազմելու ժամանակ հարկաւորէ աչքի առաջ ունենալ որ՝ աշակերտների պարապմունքը փոփոխուէին. և այնպէս որ՝ երկրորդ առարկայով պարապած ժամանակն հանգիստ առնէին այն ոյժերը, որոնք թուլացել են նորանից յառաջ եղած դասի ժամանակ: Այսպէս օրինակ, համարողութեամբ պարապելուց յետոյ, այն որ պահանջումէ զխաւորապէս մտաւոր լարուողութիւն՝ աշակերտների համար հանգիստ կլինի, եթէ նոքա հետեւեալ դասին պարապեն կամ վայելչագրութեամբ, կամ՝ նկարչութեամբ, կամ՝ երգեցողութեամբ և ըն:

Ոչ թէ միայն մտաւոր պարապմունքների մեքենական վարժութեանց փոխանակելը՝ այլ և մի քանի մտաւոր պարապմունքների ուրիշ առարկաների փոխանակելը՝ կարողէ աշակերտին հանգստացնել: Յայտնի է, որ հոգեկան բոլոր կողմերը հաւասարաշափ չեն գրգռվում՝ զանազան առարկաներով: Մի ուսանելի առարկայ լարումէ առհասարակ հոգեկան մի կողմը, զօր. յիշողութիւնը. ուրիշ առարկայ մի այլ կողմը — զօր. երևակայութիւնը. մի ուրիշ առարկայ ևս — դատողութեան ընդունակութիւնը, և ըն. և այսպէս առարկաներից երբեմն մինով և երբեմն միւսով փոփոխակի պարապելը հանգստացնումէ յոգնած ոյժերը:

Աչքի առաջ ունենալով պարապմունքների, ուսանելի առարկաների փոփոխականութեամբ մի քիչ հանգիստ տալն աշակերտներին, հարկաւոր է, իհարկէ, դասերն ևս սորա համեմատ բաժանել. զօր. Թուարանութիւնից յետոյ լեզուով և կամ՝ գրութիւնից յետոյ երկրաչափութեամբ պարապելն աւելի հանգստացնումէ աշակերտներին, քանթէ ֆրանսերէնով պարապելուց յետոյ գերմաներէնով պարապելը: Պարապմունքների փոփոխութիւնը իբրև հանգստութեան և զուարթացնելու միջոց՝ հարկաւորէ մանաւանդ

ստորին դասարաններում և մի և նոյն դասի ժամանակ, Ջօր. երեխաները ուսուէրների դասին ձանձրացել են կարգալույց. ուսուցիչը նոյա զրաւում մտաւոր կամ գրաւոր աշխատութիւններով և ընդ

3. Ինչպէս որ անյարմար է շարունակ միմեանց ետեւից մի քանի դաս նշանակել, որոնց համար պէտքէ լարել մի և նոյն հագեկան ոյժերը, այսպէս ևս անյարմար է նշանակել կարգով միմեանց ետեւից այնպիսի դասեր, ուր միմեան Ֆիզիքական վարժութիւններ են հարկաւ որ. այսպէս օրինակ, անյարմար է միմեանց ետեւից կարգով նշանակել մի քանի դասեր մարմնամարզութեան և երգեցողութեան, ձեռագործութեան (օրորդական ուսումնարաններում) և սղագրութեան (стенография), նկարչութեան և գրութեան:

Ամենից լաւ է, ինչպէս որ արդէն ասած ենք, կարգաւ օրել Ֆիզիքական վարժութիւնները մտաւոր պարապմունքների հետ, տառջիւնները վերջինների մէջտեղը՝ և կամ վերջիններից յետոյ զնեւով:

4. Մի և նոյն օրը մի որ և է առարկայից մի քանի դասեր նշանակելը չէ կարելի նպատակայարմար համարել: Մի կողմ թողնելով պատճառած ձանձրութիւնը՝ կվնասէր և յառաջադիմութեան:

Յայտնի է որ՝ աշակերտն աւելի է յառաջ դնում երբ եռաժամ դասերը բաժանուած են երեք առանձին օրերի, քան թէ այն ժամանակ՝ երբ այս դասերը նշանակէին մի և նոյն օրը. որովհետեւ աշակերտը չկարողանալով կարճ ժամանակում որոճալ և հիմնովին սեփականացնել բովանդակ Յ ժամում աւանդուածը, շատ քիչ է յառաջադիմում:

Մի և նոյն օրը Չկամ աւելի դաս նշանակելը՝ կարելի է այն ժամանակ, երբ որեւէ մի առարկայից շարաթը 6 դասից աւելի է նշանակուած, կամ երբոր ուսանելի առարկայն ունի զանազան տեսակ պարապմունքներ, այնպէս որ մի դասին կարելի է մի տեսակ բանով պարապել և միւս դասին ուրիշ տեսակ:

5. Նպատակայարմար չէ կարելի համարել այնպիսի դասակարգութիւնը, ուր մի քանի օր շարունակ նշանակուած է դասեր որեւիցէ առարկայից, և յետոյ շարաթուայ միւս օրերը չկայ այն առարկայից. մանաւանդ շատ անյարմար է այսպիսի դասակարգութիւնը ստորին դասարաններում: Մի քանի օր շարունակ ուսանելի առարկայով չպարապելուց՝ երեխաները դիւրութեամբ մոռանումեն այն առարկայից աւանդուած դասերը:

6. Անհրաժեշտ է դասակարգութեան ժամանակ յատկապէս ուշադրութիւն դարձնել, որ աշակերտներն ստիպուէին ընդհանրապէս հաւասարաչափ աշխատել ինչպէս դպրոցում, այնպէս էլ տանը: Շատ վատ է այնպէս բաժանել դասերը՝ որ մի օրն ընկնին բոլորն էլ այնպիսի դասեր, ուր հարկաւոր է միտքը լարած պահել. իսկ միւս օրն այդպիսի դասերը քիչ լինին, կամ եթէ մի օր ընկնեն բոլոր գրաւոր դասերը, իսկ միւս օրն այդպիսի դասեր չլինին:

Եւ որովհետեւ անային գրաւոր վարժութիւնները լինումեն ամեն ուսանելի առարկայից ևս, և որպէս զի միևնոյն ժամանակում չզիղուին միմեանց

վերայ շատ դրաւ որ աշխատութիւններս անհրաժեշտ է, որ միեւնոյն դասարանի վարժապետները միմեանց մէջ որոշէին իւրեանց դրաւ որ աշխատութիւններ տալու օրերը:

3. Ազգակից դասացուցակն՝ անհրաժեշտ է խտալ առհնչել դասացուցակի կարգը. թուարանութեան դասի ժամին պէտքէ թուարանութիւն լինի ուստիքնի դասի ժամին՝ ուստիքնի ելն: Գասացուցակի կարգը պահելով՝ վարժապետն աշակերտներին հետ պարապումէ այնքան ժամանակ, որքան որ պարտական է պարապելու: Նա չի խլում միւս առարկաների համար անհրաժեշտ եղող ժամանակը՝ և տալիս իւր սիրած առարկային: Աշակերտներն էլ իմանալով ամեն անգամ թէ՛ յառաջ որ դասն է, այն դասին հարկաւոր եղած բաներն են պատրաստում: Այսպէսով ուսումը հաւասարաչափ և կանոնաւոր է յառաջ գնում:

Յատկապէս այն դասարաններում՝ ուր իւրաքանչիւր առարկային առանձին վարժապետ կայ, այնպէս զիւրին դասաւարդից չէ շեղուել, (ուր իւրաքանչիւր վարժապետ որոշեալ ժամին է դասի գնում) ինչպէս այն դասարաններում՝ ուր բոլոր կամ մի քանի առարկաներն աւանդումէ մի վարժապետ: Բայց այս ժամանակ վարժապետը պէտքէ իւր միտքը դնէ որոշեալ ժամանակից յետ չընկնել առանց մի ստիպողական տառաձայնի:

4. Եթէ ուսումնական տարուայ ընթացքում՝ անհրաժեշտ կերեւոյ տարուայ սկզբում կազմուած դասընթացի փոփոխութիւնը ի հարկէ, այդ կարելի է անել: Բայց այն ժամանակ հարկաւոր է շատուց աշակերտներին յայտնել դասացուցակի փոփոխութեան մասին, որ նորա ճիշտ իմանան թէ՛ այս կամ այն օրը որ առարկան պէտքէ պատրաստել:

Ամենից լաւն այն է որ՝ նոր կազմուած դասացուցակը շարաւածուայ սկզբից (երկուշաբաթուանից) սկսուի դորձադրուել, այդ մասին իւր ժամանակին իմացնելով աշակերտներին:

5. Առաջին դասի սկզբնաւորութիւնը աւելի յարմար է նշանակել, նախելով տեղի եղանակի (կլիմայի) պայմաններին, տարուայ ժամանակին, և վերջապէս նայելով թէ՛ ինչ տեսակ դպրոց է, ոչ 9-ից յետոյ և ոչ 7-ից յառաջ է յարմար: Մինչև ճաշ եղած ժամանակը համարվումէ ուսումնարանում ամենաշարմարն ուսման համար: Այն ամիսներում՝ երբ արեգակը վաղ է ծագում (զօր. սմառը), ուսումն կարելի է աւելի վաղ սկսել, քան այն ամիսներում՝ երբ արեգակն ուշ է ծագում (զօր. ձմեռը): Վիւղերում դասերը կարելի է մի քիչ վաղ սկսել, քան թէ քաղաքներում: Վիւղական դպրոցներում ամենակար օրերը՝ անօդուտ չէր լինի առաջին դասի սկզբնաւորութիւնը 7-ի ժամին նշանակել: Այդ ժամանակ աշակերտները շատ վաղ վերջացնելով դասերը՝ դպրոցում՝ ազատ կլինէին իւրեանց ընտանեկան պարապմունքներով պարապելու:

ընտանեկան եւ հասարակական կամ դպրոցական ուսումնառութիւն, (обучение)

Երեխաների կրթութիւնը Յ տեսակ է լինում. ընտանեկան, հասարակական և դպրոցական:

Ընտանեկան ուսումնառութեան ժամանակ տղան ծնողների կամ վարձուած ուսուցիչների առաջնորդութեամբ ծանօթանումէ ուսանելի առարկաներին և միանգամայն զարգանումէ: Հասարակական կամ դպրոցական ուսումնառութեան ժամանակ երեխաները հմտութիւն ձեռք բերելու և զարգանալու համար դպրոց են գնում՝ ուր նոքա պատանիների դաստիարակութեան նուիրուած մարդիկների առաջնորդութեամբ անցնումեն նշանակուած դասընթացը և ստանումեն մի որոշիալ աստիճանի կրթութիւն և զարգացում:

Ընտանեկան ուսումնառութեան առաւելութիւնը գլխաւորապէս այնէ՝ որ հայրը, մայրը կամ վարժապետը սովորեցնելով մէկ — երկու երեխաների՝ աւելի շուտով կարող է ձանաչել նոցա անհատական յատկութիւնները և դիւրութեամբ կտրող է յարմարուել նոցա հետ ուսումնառութեան ժամանակ՝ քան թէ դպրոցի վարժապետը, որ մի և նոյն ժամանակ շատ երեխաների է սովորեցնում:

Բայց այս առաւելութիւնը՝ աննշան է, համեմատելով լաւ դպրոցի առաւելութիւնների հետ: մանաւանդ թէ՝ երեխաներին դպրոց տալն անհամեմատ արժան է նստում ծնողների վերայ: այնպէս որ դպրոցում ուսման տալ համարեա առեր կարող են, մինչդեռ իւրեանց տան մէջ շատ քչերը: Դպրոցական ուսումնառութիւնը աւելի շատ յարմարութիւնների ունի աշակերտների հիմնաւորապէս կրթութիւն ձեռք բերելու և զարգանալու համար քան ընտանեկան ուսումնառութիւնը:

Դպրոցական ուսումնառութիւնը գտնվումէ պնդիտի անձների իշխանութեան (контроль) տակ, որոնց գլխաւոր նպատակն է կրթել և դաստիարակել պատանիներին: Դպրոցում սովորեցնումեն այնպիսի անձներ, որոնք մեծ մասամբ պատրաստուած են և նուիրուած իւրեանց անձնայն գործունէութեան: յայտնի է որ՝ ամեն գործ յաջող է գնում, եթէ գործին ձեռք զարկողները հմուտ մարդիկ են: Դպրոցական ուսումնառութիւնը աւելի նպատակաշարժար է և ազատ սխալներից և անօգուտ հրապոյններից (увлечения) քան անայլինը: Դպրոցների ծրագրները և դասընթացները քննվումեն շատ մասնագէտներից:

Դպրոցական ուսման կազմակերպութիւնը և ուսման ընթացքն աւելի կանոնաւոր է քան ընտանեկան ուսումնառութեանը: Դպրոցում ուսման ընթացքին այնքան խոչընդոտներ չեն պատահում, ինչքան ընտանեկան ուսումնառութեան ժամանակ:

Լենց այն՝ որ դպրոցում սովորումեն շատ երեխաներ, նպաստումէ դրոցի յառաջդիմութեան:

Երբ վարժապետը միւսնոյն ժամանակում սովորեցնումէ չոր երեխաների

նա ստիպուած է լինում: աւելի շատ կանգ առնել վարժութիւնների վրայ և կրկնել մեկնոյնը, քան թէ երբ սովորեցնում է աշակերտի, Իսկ վարժութիւնն ու կրկնութիւնը ինչպէս ասուած է՝ աւելի հաստատ է տպաւորում իմացածը:

Միասին սովորելու ժամանակ երբեմն այս և երբեմն այն աշակերտը նկատում է առարկայից իւրեան հասկանալի եղած մասը, և իւր պատասխանով դարձնում է ընկերների ուշադրութիւնը առարկայի այդ մասի վերայ: այսպիսով աշակերտները առարկայի վերայ բազմակողմանի կը նային և հիմնաւորապէս կը սովորեն: քան թէ միմեկի սովորած ժամանակը, Պատասխանը կամ թէ պատասխանողի բացադրութիւնը միջոց է տալիս աշակերտներից ամեն միին պարզել ուսանելի առարկան: Իրաքանչիւր աշակերտ օգտւում է դպրոցական ուսման ժամանակ նորանով, ինչ որ բացադրում է վարժապետը և ինչ որ պատմում կամ պատասխանում են իւր ընկերները:

Վերջապէս Դպրոցական ուսումնառութիւնը աւելի կարող է աշակերտի մէջ ախորժանք և եռանդ յարուցանել գէպի ուսումը, քան թէ ընտանեկան ուսումնառութիւնը:

Վարժապետը սովորեցնելով մի ամբողջ դասարանի՝ աւելի հեշտութեամբ է օգւորւում, քան թէ այն ժամանակ՝ երբ նա մի աշակերտի է սովորեցնում, իսկ վարժապետի օգւորութիւնը գրաւում է աշակերտներին: Բացի դրանից միասին սովորելը՝ զրգուսւմ է աշակերտներին միմեանցից յետ շնալ: ուստի և աշակերտները սրտով են աշխատում: նուազ ընդունակներն աւելի ընդունակների հետ քարշ են գնում: Բացի ուսմանից մէջ իրած առաւելութիւններից՝ դպրոցական ուսումնառութիւնը ունի յայտնի առաւելութիւններ և կրթողական կողմից: Դպրոցն աշակերտի համար մի միջոց է, ուր նա պատրաստւում է հասարակական կեանքի համար: Ընկերութիւնը մեծ նշանակութիւն ունի մարդի մէջ լուս. յատկութիւններ զարգացնելու, ահա այսպիսի ընկերութեան է հանդիպում աշակերտը դպրոցում: Այնտեղ (դպրոցում) մշակւում են աշակերտի մէջ այն զգացմունքները և սովորութիւնները՝ որոնք անհրաժեշտ են հասարակութեան օգտին գործելու համար: աշակերտը սովորում է յարգել սիրիչների իրաւունքը, զսպել իւր անձնական ցանկութիւնները և հաճոյքները ընդհանրութեան բարիքի համար:

Դպրոցը աշակերտին նպաստում է հաստատուն բնաւորութիւն և անձնավարութիւն (составление) մշակելու: Աշակերտն ինքն իւր կողմից պատասխանատու լինելով, դպրոցում այնպիսի դրութեան մէջ է գտնւում, որ նա անպատճառ պէտք է հսկէ իւր վերայ, և անթոյլատրելի գործեր չանի: նա սովորում է համաձայնեցնել իւր գործունէութիւնը օրէնքի պահանջների հետ և կարգուկանոնին հնազանդել:

Բացի սորանից դպրոցում աշակերտը գործնական կերպով (практически) ձեռք է բերում մի քանի տեղեկութիւններ մարդիկների բնաւորութեանց,

որն իհարկէ սպտակար է. աշակերտն ազատվումէ ամաչկոտութիւնից, որն ընտանեկան կրթութիւնն ստացողներին նշան է *).

Բայց ընդունելով դպրոցի կարեւոր կրթական նշանակութիւնը, չպէտքէ մոռնալ, որ ընտանիքն ևս ունի դաստիարակական նշանաւոր ազդեցութիւն տղայի վերայ: Ամենայն դք գիտէ թէ ինչպիսի խոր հետք է թողում ընտանիքը մարդիս բարոյականութեան վերայ: Եւստ անգամ ամբողջ կեանքի ընթացքում առաջնորդումէ մարդիս այն բարոյական սկզբունքը կամ զգացումը, որ ստացել է ընտանիքից:

Սիրոյ զգացումն՝ որ կապումէ տղային իւր հօր ու մօր և միւս ազգականների հետ, դաստիարակական կարեւոր տարր է. և անհիմն կլինէր առանց կարիքի այս դաստիարակական տարրից զրկել տղային:

Դպրոցը դաստիարակութեամբ ներդրածումէ մի կողմից, իսկ ընտանիքը միւս կողմից, և տմենից լուռն այն է, երբ այս երկու դաստիարակական զօրութիւնները տղայի վերայ մի և նոյն ժամանակ են ազդում միմեանց չհակառակելով: այլ ընդ հակառակն փոխադարձաբար օգնելով:

Էնեց այս աշխի առաջ ունին բացարձակ ուսումնարաններում, որով աշակերտն օրուայ մի մասն անց է կացնում դպրոցում՝ նորա ազդեցութեան տակ, իսկ օրուայ մնացեալ մասն իւր ընտանիքի հետ ծնողների և միւս ազգականների ազդեցութեան տակ:

Վերջացնելով խօսքս պէտքէ նկատել, որ ի նկատի ունենալով երեսնայի հոգեկան դժբերի թուլութիւնը և որ ծնողները կարող են յարմարուել նորա հոգեկան կողմերին, օգտակար է, որ ուսման մէջ՝ առաջին քայլը տղան անի ծնողների անմիջական ազդեցութեան տակ, միայն թէ այդ քայլերը կանոնաւոր լինին: Բայց որովհետեւ վերջինս միշտ կարելի չէ կամ ծնողների ազատ ժամանակ չունենալուց, կամ սկզբնական ուսմունքի համար կարեւոր դիտութիւններ չունենալուց, և կամ ուրիշ որ և է պատճառով, Ուստի և անհիմն չէ, որ սկզբնական ուսմունքի համար նախադասումեն դպրոցը:

(ԿԼԻՆԻԿԱԿԱՆ)

ԳԵՂԵՍ ԺԵՂԵԱՆ ԼՆԵՐԵՒԻ ՈՒՆԵՂ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԿԱՆԱՅԵԱՆՑ

(*) Խօսելով դպրոցի ուսումնական եւ դաստիարակական առաւելութեանց վերայ մենք աչքի առաջ ունինք լաւ դպրոց, որ կազմակերպուած է մանկավարժական ուղիով, սկզբունքների վերայ:

Ինչպէս վատ ընտանիքը, այնպէս էլ վատ դպրոցը, ուր բարեկարգութիւն չկայ: Է՛ք կարողանում արդիւնաւոր կերպով ներգործել աշակերտների վերայ, այլ ընդ հակառակն աւելի վատ է ներգործում, այսպիսի դպրոցն իսկապէս չպէտքէ դիտութիւն ունենայ:

Դպրոցը բարեբերութեամբ հաւատարմութի պարտական են թէ տէրութիւնը եւ թէ ընտանիքը, որովհետեւ դպրոցը հաւատարմութի կարեւոր է թէ մէկի եւ թէ միւսի համար:

Տերութեան համար դպրոցը կարեւոր է, որովհետեւ նորա մէջ կրթվում են եւ դաստիարակվում ապագայ քաղաքացիներ, իսկ ընտանիքի համար դպրոցը կարեւոր է նորա համար, որ կրթում է եւ դաստիարակում ընտանիքի վտար անդամներին: